ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1959 Общественные науки

Ա. Ս. Հարությունյան

ՖԱԲՐԻԿԱ-ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ցարական Ռուսաստանում ֆաբրիկա-գործարանային վիճակագրության դրվածքը անբավարար էր։ Այդ վիճակագրության հիմնական աղբյուրը այն տեղեկություններն էին, որոնք նահանգապետները կցում էին իրենց տարեկան հաշվետվություններին և ներկայացնում համապատասխան գերատեսչություններին, և այն տեղեկությունները, որոնք գործարանատերերն ու ֆաբրիկանտները ամեն տարի ներկայացնում էին առևտրի ու մանուֆակտուրայի դեպարտամենտ։ Չկար կենտրոնական մի մարմին, որը ղեկավարեր այդ տեղեկությունների կանոնավոր ու միօրինակ հավաքումն ու նրանց ստուգումը։ Չկար նաև «ֆաբրիկա կամ գործարան» հասկացողության մի ստույգ բնորոշում։ Ադմինիստրացիայի նահանգական ու նույնիսկ գավառական մարմինները այդ տերմինները կիրառում էին ամենատարբեր իմաստով։ Նրանք ֆաբրիկաների ու գործարանների թվում սովորաբար մտցնում էին ջրաղացները, ձիթհանքերը, աղյուսի թրծարանները ու մանր գործատները։ Այսպես, օրինակ, Երևանի նահանգապետը էր 1875 թ. հաշվետվության մեջ ցույց էր տալիս, որ նահանգում կար 67 կաշեգործարան՝ 188 բանվորով, 232 ձեթի գործարան՝ 967 բանվորով, 31 օղեթորման գործարան՝ 76 բանվորով և այլն[1]։

1889 թ. առևտրի ու մանուֆակտուրայի դեպարտամենտը սկսեց հրատարակել «Своды данных о фабрично-заводской промышленности России». *հատորյակները։ Այս դեպարտամենտը ոչնչով չբարելավեց նյութի մշակումը, միակ դրականը, որ կատարեց, այն էր, որ մանր գործատները, այսինքն՝ 1000 ռուբլուց պակաս արտադրության գումար ունեցողները, հանեց ֆաբրիկաների ու գործարանների շարքից և այդ գործատների մասին եղած տեղեկությունները տվեց առանձին՝ առանց ըստ արտադրության բաշխելու։*

1895 թ. ֆաբրիկա-գործարանային վիճակագրության մեջ ռեֆորմ մտցվեց։ Վ. Ի. Լենինը, հանգամանորեն խոսելով այդ ռեֆորմի մասին, նշում էր, որ այն ի վերջո տալիս է գործարան հասկացողության գիտական բնորոշումը. «ֆաբրիկա-գործարանային ձեռնարկությունների» ներկայումս ընդունված սահմանման հիմնական տարրերն, ըստ երևույթին, բավական հաջող են ընտրված. 1) բանվորների թիվը ձեռնարկության մեջ 15-ից ոչ-պակաս (ընդ որում պետք է մշակվի օժանդակ բանվորներին իսկական իմաստով ֆաբրիկա-գործարանային բանվորներից սահմանազատելու, բանվորների տարեկան մի-

---

[1] *Տես.* Центральный государственный исторический архив в Ленинграде. ф. 1268, оп. 21, д. 174, л. 290.

ջին թիվը որոշելու հարցը և այլն) և 2) շոգեշարժիչի առկայությունը (թեկուզ և բանվորների ավելի պակաս թվի առկայությամբ)»[2]։

1899 թ. Ռուսաստանում ֆաբրիկա-գործարանային տեսչությունը վերակազմվեց և ստեղծվեցին վեց օկրուգներ. Պետերբուրգի, Մոսկվայի, Կիևի, Մերձվոլգյան, Խարկովի և Վարշավայի։ Այդ օկրուգները 1900—1914 թթ. ընթացքում հրատարակեցին «Своды отчетов фабричных инспекторов» հատորները։ Յուրաքանչյուր հատորը լույս էր ընծայվում հաշվետու տարուց ոչ մեծ ուշացումով։

Մեծ է այդ բազմահատորների նշանակությունը գործարանների պատմությունը ուսումնասիրելու համար։ Բայց ցավոք սրտի պետք է արձանագրել, որ նրանք չեն օգնում, կամ համարյա չեն օգնում Հայաստանի գործարանների պատմության ուսումնասիրությանը։ Բանը նրանում է, որ Հայաստանը ուշ ընդգրկվեց վերոհիշյալ օկրուգների մեջ։ Այսպես. Խարկովի օկրուգի մեջ ընդգրկվեցին. Բաքվի նահանգը՝ 1899 թ., Թիֆլիսի, Քութայիսի և Սևծովյան նահանգները՝ 1901 թ., Բաթումիի մարզը՝ 1904 թ., իսկ Երևանի, Ելիզավետպոլի նահանգները, Կարսի մարզը և Զաքաթալայի օկրուգը՝ 1913 թ.։

Իրերի նման վիճակի դեպքում Հայաստանի նախառևոլյուցիոն գործարանային արտադրության առաջացումն ու զարգացումը ցույց տալու համար անհրաժեշտ է փնտրել ուրիշ աղբյուրներ։ Այդպիսի աղբյուրներ են հանդիսանում. «Обзор отраслей промышленности в Закавказском крае, служащих источником косвенных налогов и поступление по краю доходов», «Памятная книжка Эриванской губернии», «Памятная книжка Карсской области», «Кавказский календарь», С. Глуишамбаров, «Обзор фабрик и заводов Закавказского края», Тифлис, 1894 г., С. Н. Тимофеев, «Статистика хлопководства в Закавказском крае за 1912 г.», Тифлис, 1914 г., «Труды первого кавказского съезда сельских хозяев 1909», Тифлис, 1911 г., Г. Хелимский, «Очерки горнозаводской промышленности Кавказского края», Москва, 1910 г. և այլ աշխատություններ։ Երևանի նահանգի և Կարսի մարզի նահանգապետների հաշվետվությունները նույնպես կարող են օգնել հարցի լուսաբանությանը, բայց միայն այնքանով, ինչքանով նրանցում բերված տեղեկությունները արժանահավատ են։

Նշված այդ աղբյուրների հիման վրա, դժբախտաբար, անհնարին է ցույց տալ արդյունաբերության տարբեր ճյուղերում կատարված անցումը արտադրության մանուֆակտուրային ստադիայից դեպի գործարանային ստադիան, ինչպես և ոչ բոլոր դեպքերում է հնարավոր բնութագրել գործարանների տեխնիկայի վիճակն ու բանվորական անձնակազմը։ Այս հարցերը դեռևս կարոտ են լուսաբանության։ Այնուամենայնիվ, այդ աղբյուրները հնարավորություն են տալիս ընդհանուր գծերով բնորոշելու ֆաբրիկա-գործարանային արտադրության զարգացումը նախասովետական Հայաստանում։

Հայաստանի արդյունաբերության գլխավոր ճյուղերից էր պղնձի արտադրությունը։ 1897 թ. Աչավերդու և Զանգեզուրի պղնձի ձեռնարկությունների մեծ մասը անցավ ֆրանսիական նոր ընկերության («Кавказское промышленное и металлургическое общество») ձեռքը։ Այս ընկերությունը ունենալով մեծ միջոցներ, բաց արեց նոր հանքեր, կառուցեց գործարաններ, կատարելագործեց

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 4, էջ 41։

տեխնիկան և նոր թափ հաղորդեց պղնձի արտադրության զարգացմանը։ Մի հաղորդման մեջ, որը վերաբերում է 1900 թ., այդ մասին ասված է. «Վերջին ժամանակներս օրինակելի դրության մեջ է բերվում նաև Ալավերդու գործարանը, որի մեջ հալումը այժմ կատարվում է ոչ թե փայտով, այլ քարածխով և ողջ մեխանիզմը շարժման մեջ է դրվում նավթամոտորով։ Գործարանը... բաժանված է երկու մասի, որոնք գտնվում են իրարից 2,5 վերստ հեռավորության վրա։ Վառարանի բոլոր մասերը բերված են մասամբ Ամերիկայից, մասամբ Եվրոպայից։ Նրանց մեջ կատարած հալումը տվեց շատ լավ արդյունք՝ ինչպես պղնձի քանակի ավելացման, այնպես էլ վառելիքի ու ժամանակի կրճատման տեսակետից։ Հանքանյութի տեղափոխման համար կառուցված է մոտ մեկ վերստ երկարություն ունեցող երկաթգիծ»[3]։

Գործարանների առաջացման և տեխնիկայի կատարելագործման շնորհիվ պղնձի արտադրությունը Ալավերդում արագորեն մեծանում է։ Այսպես. եթե 1900 թ. պղնձի հանքանյութը կազմում էր 536 հազ., ապա 1903 թ՝. 1558 հազ. փութ՝։ Ալավերդու պղնձաձուլական գործարանների մասին «Кавказский календарь»-ում կարդում ենք, որ այդ գործարանները «վերջին ժամանակներս իրենց գործունեության մեջ տարեց-տարի առաջադիմում են»[5]։

Բացի Ալավերդուց, պղնձի արտադրության ձեռնարկություններ են երևան գալիս նաև Զանգեզուրում։ XX դարի սկզբին այստեղ գործում էին հետևյալ ձեռնարկությունները.

1. Բայգազի, որը պատկանում էր Մելիք-Կարակոզովին, ուներ 60 բանվոր, աշխատում էր ջրի օգնությամբ և տարեկան արտադրում էր 2500 փութ կարմիր պղինձ։

2. Հալիձորի, որը պատկանում էր նույնպես Մելիք-Կարակոզովին, ուներ 120 բանվոր, աշխատում էր ջրի օգնությամբ և տարեկան արտադրում էր 3300 փութ կարմիր պղինձ։

3. Կատարի, որը պատկանում էր Մելիք Ազարյանցին, Բաղդասար Տեր-Միքելյանցին և Կարապետ Մուտաֆովին, ուներ 170 բանվոր, աշխատում էր ջրի օգնությամբ և տարեկան արտադրում էր 10 հազար փութ կարմիր պղինձ։

4. Ուգուրչայի, որը պատկանում էր Կունդուրով եղբայրներին, ուներ 350 բանվոր, աշխատում էր էլեկտրաէներգիայով և տարեկան արտադրում էր 26 հազար փութ կարմիր պղինձ։

5. Սյունիքի, որը պատկանում էր Մելիք-Ազարյանցին, ուներ ավելի քան 300 բանվոր, աշխատում էր էլեկտրաէներգիայով, տարեկան արտադրում էր 45 հազ. փութ կարմիր պղինձ և այլն[6]։

Ըստ պրոֆ. Հ. Թումանյանի բերած տվյալների, նշված յուրաքանչյուր գործարանի արտադրության աճը վեց տարվա ընթացքում հետևյալ պատկերն ուներ (հազար փթերով)[7]։ (Տե՛ս, էջ 16)։

---

[3] „Кавказский календарь за 1901 г.", отд. 3, стр. 80.

[4] Նույն տեղում, стр. 61, за 1905 г., отд. 3, стр. 52.

[5] „Кавказский календарь за 1905 г.", отд. 3, стр. 61.

[6] Տե՛ս, Г. Хелимский, Очерки горнозаводской промышленности Кавказского края, Москва, 1910, стр. 5—13.

[7] О. Е. Туманян, „Экономическое развитие Армении", ч. I. Ереван, 1954, стр. 208.

Աղյուսակը ցույց է տալիս, որ պղնձի արտադրության մեջ ամենից ավելի աչքի են ընկնում Ալավերդու, ապա Սյունիքի և Ուզուրչայի գործարանները։ Մնացած պակաս սարքավորված ձեռնարկությունները հատկանշվում են արտադրության դանդաղ տեմպերով։ Այնուամենայնիվ, բերված տվյալները ցույց են տալիս, որ հինգ-վեց տարվա ընթացքում Հայաստանում պղնձի արտադրությունը ավելի քան կրկնապատկվում է։

Գործարանները	1900	1901	1902	1902	1906
Ալավերդու	19.7	59.8	57.4	75.4	84.5
Հալիձորի	3.3	4.6	3.0	5.8	1.23
Ուզուրչայի	5.0	8.7	10.6	13.7	25.79
Կատարի	1.06	1.0	—	—	1.55
Սյունիքի	38.84	41.82	42.16	45.6	27.12
Ընդամենը	67.9	115.92	112.81	140.5	140.9

Հարկ է նշել, որ Անդրկովկասի պղնձի արտադրության մեջ Հայաստանի գործարանները պղնձի արտադրության չափերով XIX դ. երկրորդ կեսին գրավում էին երկրորդ տեղը (Աղրբեջանում գտնվող Գետաբեկի պղնձագործարանից հետո), իսկ XX դ. սկզբին առաջին տեղը[8]։

Ստացված պղնձի միայն փոքր մասն էր մշակվում Հայաստանում, իսկ մնացածը արտահանվում էր Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնները կամ Եվրոպա։

Բացի լեռնային արդյունաբերությունից, գործարաններ են առաջանում նաև Հայաստանի մշակող արդյունաբերության մեջ։ Այդպիսի գործարանների թվին է պատկանում թուջի ձուլման գործարանը։ 1891 թ. արհեստավոր Երվանդ Տեր-Ավետիքովը Երևանում հիմնում է փոքրիկ արհեստանոց։ Մի քանի տարի անց նրա արհեստանոցն ընդարձակվում է. ստեղծվում են նոր ցեխեր, բանվորների թիվը մեծանում է, հասնելով 15-ի։ Սակայն աշխատանքը կատարվում էր ձեռքերով։

1905 թ. ձեռնարկությունը տեխնիկապես կատարելագործվում է։ Ստեղծվում են փականագործական, մեխանիկական, կաթսայագործական ցեխեր, իսկ բանվորների թիվը հասնում է 60—65 հոգու։ Այդպիսով ձեռնարկությունը վեր է ածվում թուջաձուլման ու մեխանիկական գործարանի։ Գործարանը արտադրում էր բամբակի և խաղողի համար հիդրավլիկ մամլակներ, բրինձ մաքրող մեքենաներ, պոմպեր, քամահար մեքենաներ, ջրմուղ-կոյուղու սարքավորում, երկաթյա կամուրջների կոնստրուկցիաներ, շինարարական սյուներ, թուջե աստիճաններ և այլ առարկաներ[9]։ Գործարանի արտադրանքը իրացվում էր առավելապես Հայաստանի ներսում։

---

[8] Տես М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении, Ереван, 1957, стр. 415. О. Е. Туманян, стр. 211.

[9] Տե՛ս Կ. Կոզմոյան, «Երևանի Ֆ. Է. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին», Երևան, 1956, էջ 7—9։

1890-ական թվականներին Երևանում գործում էր նաև Տեր-Զաքարյանցի մեխանիկական արհեստանոցը, բայց ինչքան բանվորներով և ինչպիսի տեխնիկական հագեցվածությամբ, այդ մասին, դժբախտաբար, մենք ոչ մի տեղեկություն չունենք, միայն գիտենք, որ արհեստանոցը արտադրում էր բամբակապտիչ փոքրիկ մեքենաներ և զանազան կարգի սարքավորումներ[10]։

Երևանում Հրազդանի ափին գործում էր կաշվի մշակման գործարանը։ Գ. Ալավերդյանը նշում է, որ գործարանը կիսամեխանիզացված էր և բանվորների քանակով ու արտադրությամբ մեծ չէր[11]։ Ուրիշ տեղեկություններ, դժբախտաբար, մենք չունենք։

Սպիրտային խմիչքների արտադրության գործարաններ հիմնվեցին XIX դ. վերջերին։ 1887—1888 թթ. ձեռնարկատերերը Սարաջևն ու Թաիրովը Շվեյցարիայից ստանում են թորման ապարատներ և կառուցում կոնյակի գործարաններ։ Նրանց գործարանները աշխատում են 1889—1890 թթ. և գործարկման առաջին իսկ օրվանից տալիս են լավ արդյունք։ 1891—1894 թթ. իրար հետևից կոնյակի գործարաններ կառուցեցին ձեռնարկատերեր Սողոմոնովը, Աֆրիկովը, Գյոզալովը և Մելիք-Բաբախանովը[12]։

Բ·և այդ գործարաններից յուրաքանչյուրը տեխնիկական ինչպիսի սարքավորում ուներ և որքան բանվոր, տվյալների բացակայության պատճառով, դժբախտաբար, հնարավոր չի պարզել։ Բայց ցարական պաշտոնյա Ռ. Ի. Դանիլովիչի հաղորդումից մենք իմանում ենք, որ նրանք ունեցել են այն ժամանակվա համար կատարելագործված տեխնիկա և բավականին մեծ թվով բանվորներ։ 1894 թ. ուսումնասիրելով Արարատյան դաշտի տնտեսական պայմանները, նա գրում էր, որ օղեթորման գործարանների մեծ մասը կազմված է հասարակ վառարանից, թորման կաթսայից և սառցարանից։ «Սակայն այդ գործարանների մեջ կան մի քանի խոշորներ, որոնք աչքի են ընկնում մեքենաներով, բանվորների մեծ թվով և կատարելագործված արտադրությամբ»[13]։ Հետագայում Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամ Գ. Սոկոլովսկին իր հուշերում նշում էր, որ 1905 թ. Սարաջևի գործարանում կար 22, իսկ Շուստովի գործարանում՝ 38—40 բանվոր[14]։ Պետք է ենթադրել, որ գործարանները համարյա այդ չափ բանվորներ ունեին նաև 90-ական թվականների սկզբներին։

Նոր ստեղծված գործարանները սկզբնական շրջանում անկայուն էին։ Օրինակ՝ 1895 թ. Երևանի նահանգում կար 6 գործարան, 1896 թ.՝ 2, 1897 թ.՝ 4, 1899 թ.՝ 6, իսկ 1900 թ.՝ 2 գործարան։ Բայց սկսած 1900 թ. նրանց թիվը անշեղորեն աճում է։ 1901—1903 թթ. ընթացքում կոնյակի գործարաններ են կառուցում ձեռնարկատերերը Զելարովը, Աբրամովը, Այդինովը, Գոլովովը և ուրիշները[15]։ Այդ տարիներին վերսկսում է իր գործունեությունը նաև Աֆրիկովի գործարանը, որը փակվել էր 1903 թ. Հայաստանում եկեղեցական գույքի բրո-

---

[10] Տե՛ս, „Кавказское сельское хозяйство", 1899, № 294.

[11] Տես նրա հոդվածը „Состояние промышленности в дореволюционной Армении". («Տեղեկագիր», Հասարակական գիտություններ, 1953, № 8, էջ 26)։

[12] Տե՛ս „Кавказское сельское хозяйство", 1895, № 97.

[13] „Район тифлисско-карсско-эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях", Тифлис, 1897, стр. 701.

[14] Տես, «Հին բոլշևիկների հիշողություններ», [illegible], 1958, էջ 102։

[15] Տես, „Памятная книжка Эриванской [illegible] 1902 г." 1904, стр. 109.

նագրավման հետևանքով տեղի ունեցած դեպքերի պատճառով։ Հետագա տարիներին հանդես են գալիս Հախնազարովի ֆիրման, «Արաքս», «На вере» ընկերությունները և այլն[16]։ Միայն չորս տարվա ընթացքում (1905—1909) կոնյակի գործարանների թիվը 8-ից հասնում է 13-ի[17]։

Գործարանների քանակական աճի հետ մեկտեղ արագորեն մեծանում էր նաև նրանց արտադրանքը։ Եթե 1893 թ. գործարաններում թորված սպիրտը կազմում էր նահանգում արտադրված ամբողջ սպիրտի միայն 5,1 %-ը[18], ապա 1906 թ.՝ մոտ 40 %-ը[19]։ Հետագա տարիներին գործարաններում ավելի շատ սպիրտ է արտադրվում, քան նահանգի մանր ու միջին ձեռնարկություններում միասին վերցրած։

Անհրաժեշտ է նշել, որ գործարանների աճումն ու զարգացումը ուղեկցվում էր տեխնիկական կատարելագործումով։ Այսպես, 1902 թ. ձեռնարկատեր Սոդոմոնովը իր հին սարքավորումները փոխարինեց երկու նոր սարքավորումով, Սարաջևը մեկ տարատից անցավ երեքին, Շուստովը իր չորրորդ սարքավորման կողքին ավելացրեց հինգերորդը և այլն[20]։ Ստորև բերված տվյալներից կարելի է դատել գործարանների տեղաբաշխման ու արտադրանքի չափերի մասին[21]։

Գործարանատիրոջ ազգանունը	Գործարանի տեղը	Կոնյակային սպիրտ	սպիրտ (աստիճ.-ով)	գինի (դույլերով)
Շուստով	Երևան	3000000	2000000	100000
Սարաջևի ընկերությունը	»	1500000	2000000	
Արրամովի ֆիրման	Ղամարլու	450000	100000	6000
Հախնազարովի ֆիրման	Երևան	100000	10000	1500
«Արաքս» ֆիրման	Ղամարլու	1500000	1500000	15000
„На вере" ընկերությունը	»	—	1500000	—

Աղյուսակում չեն ընդգրկված բոլոր գործարանները, բայց նրանում մոտավորապես բացահայտվում է իրերի դրությունը։ Գործարանները հիմնականում գտնվում էին Երևանում և Արտաշատում (Ղամարլու), ընդ որում առաջինում գտնվում էին առավելապես կոնյակի, իսկ երկրորդում՝ գինու գործարանները։ Ժամանակակիցներից մեկը նշում էր, որ «գինեգործության ամենախոշոր կենտրոնը հանդիսանում է Արտաշատ (Ղամարլու) գյուղը, որտեղ արտադրվում է ավելի քան 100 հազ. փութ տեղական գինի»[22]։

Սպիրտային խմիչքների արտադրության մեջ խոշոր դեր էր խաղում ձեռնարկատեր Շուստովը։ 1903 թ. նա արտադրել է 751 հազ., Աֆրիկովը՝ 108

[16] Տե՛ս Центральный государственный архив Армянской ССР, ф. 124, д. 39, л. 9.

[17] Տես, „Обзор отраслей промышленности...", за 1909 г., стр. 189.

[18] Տես, „Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе", вып. 6, стр. 112.

[19] Տես, „Кавказский календарь на 1909 г.", отд. 4, стр. 527—528.

[20] Տես, ЦГА Армянской ССР, ф. 124, д. 39, л. 9.

[21] Տես, Նույն տեղում, ф. 133, д. 5010, л. 11—12.

[22] Տես, „Краткий обзор коммерческой деятельности Закавказской железной дороги за 1910 г.", стр. 128.

հազ., Սարաջևը՝ 202 հազ., Սողոմոնովը՝ 21 հազ., Չելաբովը՝ 102 հազ. աստիճան սպիրտ[23]։ Այլ կերպ ասած՝ Շուստովը ավելի շատ է արտադրել սպիրտ, քան մյուս գործարանատերերը միասին վերցրած։

Սպիրտային խմիչքեղենը Հայաստանից արտահանվում էր Ռուսաստանի զանազան վայրերը՝ Թբիլիսի, Մոսկվա, Վարշավա, Պետերբուրգ, Օդեսա, Անդրկասպյան երկրները, Թերեքի, Դաղստանի, Կուրսկի նահանգները, Մերձալթիկա, Սիբիր և այլն[24]։ Անդրկովկասի աբցիզային գանձումների բաժնի վարիչ Լ. Լ. Պերշկեն դեռ 1901 թ. գրում էր, որ այժմ «չկա ոչ մի քաղաք, որ չթափանցի Կովկասի կոնյակը»[25]։ Հայաստանի կոնյակը իր որակով բարձր էր և Պետերբուրգում հաջողությամբ մրցում էր ֆրանսիական կոնյակի հետ, դուրս մղելով նրան շուկայից[26]։

Հայաստանում գործարանային արտադրության անցնելուց հետո բարելավվում է նաև գինիների որակը։ Դեռ 90-ական թվականներին խոշոր ձեռնարկատերերը սկսեցին արտադրել լիկյոր, իսկ XX դ. սկզբին՝ բազմատեսակ քաղցրահամ գինիներ։ 1909 թ. մի հաղորդման մեջ ասված է, որ փոխվել են արտադրվող գինիների տեսակները, այժմ գինեգործները, հաշվի առնելով նոր սպառողների՝ ներքին Ռուսաստանի բնակչության պահանջները, մասսայաբար արտադրում են լիկյոր և դեսերտ քաղցրահամ գինիներ[27]։

Գինիների արտադրության մեջ Հայաստանը Անդրկովկասում գրավում էր երկրորդ տեղը, իսկ կոնյակի արտադրության մեջ՝ առաջին տեղը։ Օրինակ՝ 1906 թ. Անդրկովկասի 12 կոնյակի գործարաններից 8-ը գտնվում էր Հայաստանում։ Այդ նույն թվին Անդրկովկասի գործարաններում թորվել էր 2890 հազ. աստիճան սպիրտ, որից 2401 հազ. աստիճանը՝ Հայաստանի գործարաններում[28]։ Եթե XIX դ. երկրորդ կեսին Հայաստանի սպիրտային խմիչքները իրացվում էին գլխավորապես երկրի ներսում, ապա XX դ. սկզբին՝ երկրից դուրս Ռուսաստանի զանազան քաղաքներում։ Գործարանների աճի և զարգացման շնորհիվ ամրացվում էր Հայաստանի կապը համառուսական շուկայի հետ։

Բամբակի սկզբնական մշակման մեջ գործարանների հիմնադրումը սկսվեց 80-ական թվականների վերջերից, երբ «Большая ярославская мануфактура» և «Андрей Корзинкин» ընկերությունները Երևանում և Ենգիջա գյուղում (Շարուր-Դարալագյազի գավառ) բամբակի գնման և զտման նպատակով կառուցեցին դրասենյակներ (контора)։

Բամբակի սկզբնական մշակման էությունն այն էր, որ նախքան արդյունաբերական կենտրոններ ուղարկելը, բամբակը չորացնում էին և հետո մանրաթելը մաքրում սերմերից։ Սկզբնական շրջանում այդ մաքրումը կատարվում էր ձեռքով, հետագայում՝ «չագրիխ» կոչված պրիմիտիվ գործիքով, իսկ XIX դ. երկրորդ կեսում՝ «ջին» մեքենայով։ 1891 թ. Պագիրովը նշում էր, որ այժմ բամբակի զտումը կատարվում է «ջիներով», իսկ ձեռքերով կամ «չագրիխ» գործիքով զտելու եղանակը արդեն նետվել է անցյալի դիրքը[29]։ Պագիրովը

---

[23] Տես, ЦГА Армянской ССР, ф. 124, д. 11, л. 9.
[24] „Обзор отраслей промышленности....", за 1901 г., стр. 169.
[25] Նույն տեղում, էջ 164։
[26] Նույն տեղում, էջ 164—165։
[27] Տես, „Обзор отраслей промышленности...", за 1909 г., стр. 204.
[28] Տես, „Кавказский календарь на 1909 г., отд. 4, стр. 528.
[29] Տես, „Новое обозрение", 1891, № 2640.

հանդամանքներն նկարագրում էր բամբակի գումն և մամլման պրոցեսը վերոհիշյալ ընկերությունների կողմից կառուցած գրասենյակներում։ Օրինակ, «Большая ярославская мануфактура» ընկերության գրասենյակում բամբակը չորացնելուց հետո մաքրում էին սերմից և ապա մամլում։ «Մամլման համար գործ են ածում ջրաշխատական մեծ մամլիչներ, որոնք եղակի են Երևանում, քանի որ մնացած գրասենյակներում բամբակը մամլում են ձեռքի մամլիչներով։ Նկուղային հարկում տեղավորված մամլիչը շարժման մեջ է դրվում չորս ձիերով»[30]։ Մամլման պրոցեսին մասնակցում էր 8 մարդ. երկուսը ղեկավարում էին ձիերին, իսկ մնացածները կոխում էին սորկղները, գոտևորում և կարում հակերը։ Բացի այդ 8 հոգուց, մամլման պրոցեսին մասնակցում էին նաև 7 սեզոնային բանվորներ։ Սրանց կատարած ֆունկցիաների մասին, դժբախտաբար, Պագիրովը ոչինչ չի նշում։ «Большая ярославская мануфактура» ընկերությունը ուներ ձեռնարկությանը հումք մատակարարող 10 գնորդներ[31]։

1890-ական և 1900-ական թվականների բամբակազտիչ գործարանների զարգացման մասին մենք տեղեկություն չունենք, հայտնի է սակայն, որ XX դ. սկզբին բամբակազտիչ ձեռնարկություններ ունեին արդեն մի շարք հայ կապիտալիստներ։ Այսպես, Երևանի գավառում այդպիսի ձեռնարկություններ ունեին՝ Տիգրան Տեր-Մաթևոսյանը, Սարգիս Սիմոնյանը, Գրիգոր Խուդավերդյանը, Ռուբեն Հակոբյանը, Սուրմալուի գավառում՝ Ավետիսյան եղբայրները, Մկրտիչ Գևորգյանը, Դավիթ Սարգսյանը, Գրիգոր Ներսիսյանը, Էջմիածնի գավառում՝ Արմենակ Շախոյանը, Ենգիբար Եղիազարյանը, Առաքել Դրամպյանցը, Սիրական Հարությունյանը, Շարուր-Դարալագյազի գավառում՝ Բաբկեն Եղիազարյանը, Գևորգյան եղբայրները, Մարկոս Ստեփանյանը, Անդրեաս Կարապետյանը, Նախիջևանի գավառում՝ Թադևոս Մարգարյանը, Խաչատուր Հակոբյանը, Մակար Տեր-Ստեփանյանը և շատ ուրիշները[32]։

1912 թ. բամբակազտիչ բոլոր կարգերի ձեռնարկություններն ու գործարանները Երևանի նահանգում հետևյալ կերպ էին տեղաբաշխված[33]։

Գավառները	Շարժիչների տեսակները				
	Նավթամոտորային	շոգեշարժիչ	ջրաշարժիչ	ձիաշարժիչ	ընդամենը
Երևանի	10	12	51	—	73
Էջմիածնի	21	20	27	10	78
Սուրմալուի	57	—	14	13	84
Շարուր-Դարալագյազի	14	—	35	—	49
Նախիջևանի	6	11	26	1	44
Ընդամենը	108	43	153	24	328

Դժբախտաբար մեզ չհաջողվեց հրատարակված և արխիվային աղբյուրներում գտնել լրացուցիչ տվյալներ այդ ձեռնարկություններում զբաղված բան-

[30] Նույն տեղում № 2648։

[31] Նույն տեղում։

[32] Տես, С. Н. Тимофеев, „Статистика хлопководства в Закавказском крае", Тифлис, 1914, стр. 66—85.

[33] Նույն տեղում, էջ 5։

վորների մասին, որը, անշուշտ, կօգներ որոշելու գործարանների թիվը։ Անուղղակի կերպով կարելի է սակայն ենթադրել, որ քիչ թե շատ խոշոր գործարանների թիվը 50-ից չէր անցնում։ Ս. Ն. Տիմոֆեևը նշում էր, որ Երևանի նահանգում միայն 50 գործարան էր այսպես թե այնպես սարքավորված և արտադրում էր սեզոնը 1500—2000 փութ մաքուր մանրաթել։ Համարյա նույն բանն էր հաստատում նաև Երևանի նահանգի բամբակագործության խոշոր մասնագետ Ն. Պ. Տարատինովը։ Վերջինս 1913 թ. գրում էր. «Պրիմիտիվ փայտյա «չագրիխների» փոխարեն, որոնք առաջ ծառայում էին բամբակը սերմից մաքրելու համար, այժմ մենք արդեն ունենք մի քանի հարյուր ամերիկական մեքենա՝ ջին և տասնյակ արդեն խոշոր, լավ և լիակատար սարքավորված բամբակազտիչ գործարաններ և մի քանի ձեթագործարան։ Բացի դրանից, մի քանի գործարաններ կառուցվում են հենց հիմա»[35]։

Սկզբնական մշակումից հետո, բամբակի մամլաթելը Հայաստանից արտահանվում էր ռուսական արդյունաբերական կենտրոնները։

Կաթի մշակման ընագավառում կատարելագործված առաջին ձեռնարկությունները երևան եկան XIX դ. 60-ական թվականներին՝ Բորչալուում։ Հետագա 90-ական թվականներին նրանք հասան զգալի զարգացման։ Առաջին պանրի և յուղի ձեռնարկությունները կառուցեցին եվրոպացիները՝ մասնավորապես Շվեյցարիայից եկած ձեռնարկատերերը։ Շուտով եվրոպացիների օրինակով ձեռնարկություններ կառուցեցին նաև տեղացիները՝ ռուսները, հայերը, վրացիները և ադրբեջանցիները։ 14 տարվա ընթացքում (1894—1908) Լոռում հիմնվեցին 20-ից ավելի ձեռնարկություններ[36]։ Առանձնապես աչքի էին ընկնում ձեռնարկատերեր Թալանովի, Շադինովի, Դասաևի, Քալաթարովի, Նասիրոզով, Կիրիլովի, Գրաֆի, Սոլովյովի, Կուրպիևի, Պավլովի, Ջաղինյան եղբայրների և այլոց ձեռնարկությունները։ Այս ձեռնարկություններից յուրաքանչյուրը տարեկան արտադրում էր միջին հաշվով 29 հազ. փութ պանիր[37]։ Շնորհիվ անասնապահության և կաթնապրանքային տնտեսության զարգացման, ժամանակակիցները Լոռին անվանում էին «Հայկական Շվեյցարիա»[38]։

Բացի Լոռուց, 90-ական թվականների վերջերին և հատկապես 1900-ական թվականներին, կաթի մշակման ձեռնարկություններ հանդես եկան նաև Կարսի մարզում։ Նրանց կառուցողները այստեղ նույնպես հանդիսանում էին առավելապես եվրոպացիները՝ Լինգարդը, Դելենբախը, Ջիդենթալերը, Բրիկսինը, Ռոդլիսբերգը, Ամմստերը և ուրիշները[39]։ Շուտով եվրոպացիների օրինակին հետևեցին նաև տեղացիները՝ Պոկրովսկին, Բոգդանովը, Էմիրխանսկին, Սալիմսկին, Հակոբովը և մյուսները[40]։ 1908 թ. այստեղ եղած ձեռնարկություններից եվրոպացիներին պատկանում էր 46,5%, ռուսներին՝ 31,5%, հայերին՝ 5,4%, իսկ մնացածը՝ այլ ազգի ձեռնարկատերերին[41]։

---

[34] Տես, նույն տեղում, էջ 4։

[35] „Весь Кавказ", под ред. М. С. Шансовича, приложение 1914, стр. 127.

[36] Տես. „Труды первого кавказского съезда сельских хозяев 1909", Тифлис. 1911 г. стр. 330.

[37] Տես, նույն տեղում, էջ 328։

[38] Տես, «Գյուղատնտես», 1912, № 22, էջ 339։

[39] Տես. „Труды первого кавказского съезда сельских хозяев 1909", Тифлис. 1911, стр. 330.

[40] Տես, նույն տեղում.

[41] Տես, նույն տեղում։

Նոր-Բայազետի գավառում կաթնամշակման գործարանի ստեղծման առաջին փորձը եղավ 1886 թ., երբ Օգնության առևտրական տան գործակալ Մաթթեոս Խրիստակին Զոդ գյուղում կառուցեց պանրի մշակման ձեռնարկություն[42]։ Այդ ձեռնարկության հետագա տարիների գործունեության մասին մենք, դժբախտաբար, տեղեկություն չունենք։ XX դ. սկզբին կաթնամշակման ձեռնարկություններ ստեղծվեցին գավառի Ալեքսանդրովկա, Միսխանա, Սեմյոնովկա, Շորժա և այլ գյուղերում[43]։ Այս գավառում առանձնապես աչքի էր ընկնում մեն Ա. Նիկողոսյանի ձեռնարկությունը։ Նա վարձակալում էր մեծ տարածությամբ արոտավայրեր, ուներ 150 կով, ավելի քան 15 վարձու աշխատողներ և տարեկան մշակում էր 6 հազ. փութ կաթ։ Ստացված յուղն ու պանիրը վաճառքի էր հանում առավելապես Երևանում և Ալեքսանդրոպոլում[44]։

Կաթնամշակման ձեռնարկություններ կային նաև Ալեքսանդրոպոլի գավառում։ 1913 թ. նրանց թիվը այստեղ հասնում էր 15-ի[45]։

Հայաստանի բոլոր տեղերում կաթնամշակման գործարանները հագեցված էին Դելիս, Լեվալ, Պերֆեկտ, Սվեյ և այլ տիպերի սերպատ մեքենաներով։ Այս մեքենաները Հայաստանում տարածվեցին 1890-ական թվականների վերջերից և հատկապես XX դ. սկզբներին։ Ցարական պաշտոնյա Բ. Ս. Էսաձեն 1910 թ. նշում էր, որ ամենուրեք բնակչության մեջ նկատվում է մեծ հետաքրքրություն դեպի կաթի մշակումը, «պանրագործարանների և յուղագործարանների թիվը, որոնցում արդեն մտցված են կաթնային տնտեսության արդյունքների բարձր որակի պատրաստման եղանակներ, տարեց-տարի աճում է»[46]։

Ինչ վերաբերվում է բանվորների թվին, ապա այդ մասին մենք ունենք հետևյալ տեղեկությունները։ Կարսի նահանգապետը 1904 թ. հաշվետվության մեջ գրում էր, որ «Սուլիդյուպ» վայրում (Արդահանի օկրուգ) ընկերակցական սկզբունքներով ստեղծված են երկու գործարաններ, որոնք կատարելագործված մեքենաների օգնությամբ մշակում են կաթնային արդյունքներ, աշխատում են 54 բանվոր[47]։ Բորչալուի գավառի կառավարչապետը 1907 թ. նշում էր, որ Լոռու գավառամասում կար պանրի և յուղի 32 գործարան՝ 600 բանվորով, այսինքն յուրաքանչյուր գործարանում միջին հաշվով՝ 19 բանվոր[48]։

Պանրի և յուղի արտադրանքի աճի մասին կարելի է պատկերացում կազմել Կարսի մարզին վերաբերող հետևյալ աղյուսակից[49]։ (Տե՛ս էջ 23)։

Աղյուսակը ցույց է տալիս, որ 7 տարվա ընթացքում ձեռնարկությունների թիվը աճում է ավելի քան 10 անգամ, կովերի թիվը՝ 7 անգամ, կաթի արտադրությունը՝ 5 անգամ, իսկ պանրինը՝ 12 անգամ։ Ձեռնարկությունների

---

[42] Տես, „Материалы для устройства казенных летних и зимних пастбищ", т. 2, ч. I, стр. 75.

[43] Տես, ЦГА Армянской ССР, ф. 133, д. 4993, л. 37.

[44] Տես, «Մշակ», 1909, № 182։

[45] Տես „Обзор Эриванской губернии за 1913 г.", стр. 11.

[46] „Очерки Карсской области", вып. I, экономические и хозяйственные нужды, 1912, стр. 26.

[47] Տես, „Обзор Карсской области" за 1901, стр. 10.

[48] Տես, Центральный государственный исторический архив Грузинской ССР, ф. 17, л. 94 0, л. 30—31.

[49] Տես, „Обзор Карсской области", за 1905, 1907, 1909, 1910, 1912, стр. 12, 13, 25, 31, 35, „Памятная книжка Карсской области за 1914 г.".

զարգացման և նրանց արտադրանքի աճի պատկերը համարյա նույնն էր նաև Հայաստանի մնացած շրջաններում։

1 Տարի- ները	2 գործարան- ների թիվը	3 կովերի թիվը	4 կաթը (փթերով)	5 պանիրը (փթերով)
1905	6	2413	1079	2,730
1907	9	1945	2252	5455
1909	14	5017	2030	8430
1910	24	8093	6444	13,664
1912	64	18,539	5656	34,108

Անհրաժեշտ է նշել, որ ձեռնարկություններում մշակվում էր ոչ միայն ձեռնարկատերերի սեփական կովերից ստացված, այլև գյուղական բնակչությունից գնած կաթը։ Շատ ձեռնարկատերեր, օգտվելով գյուղացիների անելանելի դրությունից, իրենց գործակալների միջոցով փող էին տալիս նրանց և ապա էժան գներով կաթ վերցնում։ Կաթի ձեռք բերման այս եղանակը, անշուշտ, ձեռնտու էր ձեռնարկատերերի համար։ Օրինակ՝ 1909 թ. Լոռու գավառամասում եղած բոլոր 33 գործարաններից 16-ում մշակում էին գնած կաթ, 12-ում՝ գնած և սեփական, և միայն 5-ում՝ սեփական կաթ[50]։

Ձեռնարկատերերը պատրաստում էին շվեյցարական, հոլանդական և տեղական պանիր։ Նրանք ավելի շատ պատրաստում էին շվեյցարական պանիր, քանի որ այն ավելի լավ էր վաճառվում։ Նույն գավառամասում, օրինակ, 25 ձեռնարկություններում պատրաստվում էր շվեյցարական, 3-ում տեղական և մեկ ձեռնարկությունում հոլանդական պանիր[51]։

Ձեռնարկատերերը տեղական պանիրը վաճառում էին Հայաստանում և Անդրկովկասում, իսկ շվեյցարական և հոլանդական պանիրը արտահանում էին Ռուսաստանի զանազան քաղաքներ։ Արդյունքը իրացնելու համար նրանք կապ էին հաստատել Թիֆլիսի, Դոնի Ռոստովի, Օդեսայի և Մոսկվայի հետ[52]։

Կաթնամշակման ձեռնարկությունների ծագումն ու զարգացումը հաճախ տեղի էր ունենում չքավոր գյուղացիներին մասսայաբար հողից արտաքսելու հանգամանքով։ Այսպես, Լոռվա ձեռնարկատերերից մեկը՝ Նիդիգերը սկզբում աշխատում էր Կուչենբախի մոտ որպես պանիր պատրաստող։ Կուտակելով միջոցներ, 1884 թ. նա փ. Կամարլի գյուղում հիմնեց սեփական կաթնամշակման ձեռնարկություն։ Նիդիգերը վարձակալեց իշխան Արղությանից 1500 դես. հողամաս, որի վրա բնակվում էին 24 գյուղացիական ընտանիք։ Սկզբում նա հողամասը տալիս էր վարձակալության հենց այդ գյուղացիներին, բայց հետո կամաց-կամաց նրանց մեծ մասին քշեց հողամասից և թողեց միայն վեց ընտանիք, որոնց և դարձրեց իր վարձու բատրակները։

Ժամանակակիցներից մեկը, որ տեղյակ էր այդ ձեռնարկության առաջացման ու զարգացման պատմությանը, նշում էր «պ. Նիդիգերի 22 տարվա

[50] Տես, «Գյուղատնտես», 1910, № 28, էջ 408։
[51] Նույն տեղում։
[52] Տես, „Обзор Карсской области", за 1910 г., стр. 36.

կապիտալիստական դոոծունեության արդյունքը այն եղավ, որ նախկին 100 ինքնուրույն գյուղացիների փոխարեն այժմ փ. Կամարլի գյուղում ապրում են միայն 40 հոգի, որից 2-ը՝ տերեր, 12-ը պանիր պատրաստող շվեյցարացիներ, 7-ը՝ հովիվներ, 3-ը՝ պահակներ և 16-ը կթվորներ»[53]։

Հողից զրկված գյուղացիները հայտարարում էին. «Տասնյակ տարիներ մենք ապրել ենք այդ հողի վրա և մշակել այն», «այստեղ գտնվում էր մեր հայրերի գերեզմանները» և այլն[54]։ Չնայած գյուղացիների դիմադրությանը, հրկիզումներին և նույնիսկ մահափորձերին, ձեռնարկատերերը այնուամենայնիվ արտաքսում էին նրանց դեպի Անդրկովկասի դանազան շրջաններ։

Գործարանային արտադրության զարգացումը տեղի էր ունենում Հայաստանի արդյունաբերության նաև երկրորդական ճյուղերում։ Այդպիսի ճյուղերից էր մետաքսի արտադրությունը։ 1870—1872 թթ. ձեռնարկատեր Բաբաևն ու Ֆարաջևը Օրդուբադ քաղաքում և Ագուլիս գյուղում հիմնեցին մետաքսափաթաթման գործարաններ[55]։ Նրանք ձեռքի օգնությամբ շարժվող դազգահները փոխարինեցին շողեկաթսայով, որը հեշտացրեց մետաքսափաթաթման գործը և բարձրացրեց աշխատանքի արտադրողականությունը։

Հետագա 10—15-տարում մետաքսափաթաթման բնագավառում շերամի որդի հիվանդության պատճառով էական տեղաշարժեր չկատարվեցին։

Սակայն 90-ական թվականների սկզբներից այդ գործարանների թիվը սկսում է արագորեն աճել։ Ըստ Ս. Գուլիշամբարովի 1894 թ. տեղեկությունների, մետաքսափաթաթման բնագավառում «վերջին չորս տարվա ընթացքում տեղի է ունենում լուրջ փոփոխություններ... Հանդես են գալիս մի քանի ֆաբրիկաներ»[56]։

1900 թ. գործարանները մետաքսափաթաթման արտադրության մեջ արդեն գերիշխող դեր էին խաղում։ Այսպես. Օրդուբադի գավառամասում կար 7 մետաքսափաթաթման գործարան և 7 մանրապրանքային ու մանուֆակտուրային տիպի ձեռնարկություն։ Գործարանների համախառն եկամուտը կազմում էր 78500 ռ., բաց արած մետաքսը (размотанный шелк) 379 փութ, մշակած բամբակը (выделенная вата)՝ 413 փութ, բանվորների թիվը՝ 290 հոգի, իսկ ձեռնարկություններինը՝ համապատասխանաբար 33. 620 ռ., 152 փութ, 161 փութ, 81 հոգի[57]։

Մետաքսափաթաթման գործարաններից 5-ը գտնվում էին Օրդուբադ քաղաքում, 2-ը՝ Ագուլիս և Զանգեզուր գյուղերում, իսկ ձեռնարկություններից 2-ը գտնվում էին Օրդուբադում, 4-ը՝ Զանգեզուր և 1-ը՝ Ներքին Ագուլիս գյուղերում[58]։

Մետաքսափաթաթման գործարանների մասին ավելի կոնկրետ տեղեկություններ տալիս է հետևյալ աղյուսակը[59] (տե՛ս էջ 25)։

---

[53] „Кавказское сельское хозяйство", 1902, № 417.

[54] Там же, 1905, № 581.

[55] Տես, ЦГИА Грузинской ССР, ф. 5, оп. 2, д. 2191, л. 28.

[56] С. Гулишамбаров, Обзор фабрик и заводов Закавказского края, Тифлис, 1894, стр. 319—320.

[57] Տես, „Памятная книжка Эриванской губернии на 1904 г.", отд. 3, стр. 22—24.

[58] Նույն տեղում։

[59] Նույն տեղում։

Այդ տվյալները ցույց են տալիս, որ մետաքսափաթաթման գործարանները իրենց ունեցած բանվորների թվով ու տված արտադրանքի չափերով քիչ են տարբերվում միմյանցից։

Գործարանատիրոջ ազգանունը	Բանվորների թիվը	Ելց արած մետաքսի քանակը (փթերով)	Մշակած բամբակի քանակը (փթերով)	Համախառն եկամուտը
Բաբան	23	49	52	10870
Ֆարաջև	44	50	53	11160
Նազիև	38	46	49	10300
Արաբով	33	45	55	11600
Ռիզան	45	62	67	10450
Ադամալով	56	62	68	10020
Սարգիսով	51	65	69	14100
Ընդամենը	290	379	413	78500

Ն. Ս. Լավրովը Երևանի նահանգում եղած բոլոր մետաքսափաթաթման գործարաններն ու ձեռնարկությունները բաժանում էր երեք խմբի. 1) ձեռնարկություններ, որոնք բոժոժներից պատրաստում էին մետաքս «ֆիլատուր» կամ, ըստ տեղացիների արտահայտության, «կրեժ», 2) ձեռնարկություններ, որոնք «կրեժից» պատրաստում էին թելեր, և 3) ձեռնարկություններ, որտեղ միացված էին այդ երկու պրոցեսները[60]։ Այսպիսի պայմաններում, պետք է ենթադրել, որ մետաքսափաթաթման պրիմիտիվ ձեռնարկությունները չէին կարող կախվածության մեջ չլինել կատարելագործված գործարաններից։

XX դ. սկզբին մետաքսագործության զարգացման հետևանքով գործարանների թիվը մեծանում է։ 1913 թ. մետաքսափաթաթման ձեռնարկություններ ստեղծվում են ինչպես Նախիջևանում, նույնպես և Վերին և Ներքին Ագուլիս, Ապի, Շուռուտ, Ղալանչի, Վանանդ, Ջանանաբ, Թափակերտ և այլ գյուղերում[61]։

Նախնական մշակումից հետո մետաքսը Հայաստանից արտահանվում էր Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնները՝ Մոսկվա, Լոձ, Վարշավա և այլն։

1882 թ. գավառապետ Խան-Աղովը Էջմիածնի գավառում հիմնում է ձեթի գործարան։ Այս գործարանը, ըստ Ա. Գեևսկու հաղորդման, գործում էր շոգու օգնությամբ և արտադրում էր բարձրորակ ձեթ, որը իրացվում էր Անդրկովկասի գանազան վայրերում[62]։ Խան-Ագովի գործարանի մասին ուրիշ տեղեկություններ չունենք։ Հավանական է, որ ձիթաբույսերի ցանքատարածությունների կրճատման հետևանքով նրա գործարանը հետագայում փակվեց։

1880-ական թվականներին Զոլոտարևն ու Բլանկենբուրգը Երևանում կառուցում են պահածոների պատրաստման գործարան։ Ս. Գուլիշամբարովը 1890 թ. լինելով Երևանում, տեսել է, որ գործարանը ունեցել է 32 բանվոր,

[60] Տես, „Кавказское сельское хозяйство", 1895, № 100.
[61] Տես, ЦГА Армянской ССР, ф. 133, д. 4993, л. 39.
[62] Տես նրա „Краткий очерк земледелия за Кавказом", Тифлис, 1887, стр. 32.

Ռիդեր սիստեմի վառարան, 14 չորացնող ապարատներով և շաքարի բյուրեղացման համար սարքավորանք[63]։ Բացի պահածոների պատրաստումից, գործարանում չորացվում էին նաև մրգեր։ Օրինակ՝ 1889 թ. այստեղ չորացվել է մոտ 30 հազ. ռուբլու միրգ և վաճառքի է արտահանվել Հայաստանի ու Անդրկովկասի զանազան վայրերը։ Հետագայում գործարանի արտադրանքը էլ ավելի է ընդլայնվում և դուրս է գալիս համառուսական շուկա[64]։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ երկու-երեք տասնամյակում Հայաստանում առաջ են գալիս ու զարգանում մի շարք գործարաններ։ Այդ գործարանները առաջ էին գալիս հումքի արտադրության շրջանում։ Աշխարհագրական տեսակետից նրանք հետևյալ կերպ էին տեղաբաշխված. պղնձաձուլական գործարանները գտնվում էին Ալավերդում, Զանգեզուրում և Ղափանում, կաթնամշակման գործարանները՝ Կարսի մարզում, Լոռիում և երկրի լեռնային այլ շրջաններում, սպիրտային խմիչքների գործարանները՝ առավելապես Արարատյան դաշտում, մետաքսափաթթման գործարանները՝ Օրդուբադի գավառամասում և այլն։

Որպես տեղական առանձնահատկություն պետք է նշել, որ ի տարբերություն Եվրոպական Ռուսաստանի, Հայաստանում գործարանային արտադրությունը երևան եկավ ավելի ուշ։ Առաջին գործարանները այստեղ կառուցեցին XIX դ. վերջում, այսինքն՝ այն ժամանակ, երբ Եվրոպական Ռուսաստանի արդյունաբերության մեջ նրանք արդեն տիրապետող դեր էին խաղում։ XIX դ. վերջում Հայաստանում գործարանների թիվը քիչ էր, իսկ արտադրության ծավալը՝ փոքր։ Երկրի արդյունաբերության նշված ճյուղերում գործարանները քիչ թե շատ լայն զարգացում ստացան առավելապես XX սկզբին։

Հայաստանում գործարանների զարգացումը տեղի էր ունենում ռուսական կապիտալիզմի պահանջներին համաձայն. նրանք առաջ էին գալիս երկրի տնտեսության այն ճյուղերում, որոնք հումք էին մատակարարում մետրոպոլիայի արդյունաբերական կենտրոններին։ Գյուղատնտեսական որոշ մթերքներ վերջնականապես մշակվում էին տեղում, բայց բնորոշ է, որ արդյունքը արտահանվում էր վաճառքի նույնպես մետրոպոլիայի արդյունաբերական կենտրոնները։

Ի տարբերություն Եվրոպական Ռուսաստանի, Հայաստանում գործարանները թույլ էին զարգացած։ Այստեղ նրանց զգալի մասը կրում էր սեզոնային բնույթ. բացվում էր, երբ սկսվում էր բերքահավաքը, փակվում, երբ վերջանում էր հումքը։ Ամբողջ տարին անընդհատ բանող գործարանների մի մասն էլ տեխնիկապես թույլ էր հագեցված։ Գործարանները չկարողացան վերջնականապես դուրս մղել նախագործարանային արտադրությունը։ Այդ պատճառով մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում շարունակում էին էական դեր խաղալ մանուֆակտուրային, մանր ապրանքային, արհեստային արտադրությունը և նույնիսկ տնային արդյունաբերությունը։

Հայաստանի գործարաններում, եթե չհաշվենք պղնձահանքերը, բանվորների թիվը փոքր էր։ Այն տատանվում էր 16—40-ի սահմաններում։ Բանվորների զգալի մասը վերջնականապես չէր կտրված հողից։ Աշխատելով գործարանում, բանվորները միաժամանակ, կամ տարվա որոշ եղանակներին շա-

[63] Տես Ս. Դուլիշամբարով, էջ 373։

[64] Տես „Обзор Эриванской губернии за 1910 г.", стр. 5.

բունակում էին զբաղվել նաև գյուղատնտեսական աշխատանքներով։ Սեզոնից-սեզոն բանող գործարանները, բնական է, չունեին բանվորական մշտական կազմ. գործարանը փակվելուց հետո բանվորները ցրվում էին և անցնում ուրիշ աշխատանքի։

Այնուամենայնիվ, գործարանային արդյունաբերության զարգացումը խոշոր իրադարձություն էր Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքում։ Գործարանը նպաստեց արտադրողական ուժերի զարգացմանը, հանրայնացրեց աշխատանքը և բարձրացրեց նրա արտադրողականությունը, վերացրեց անձնական կախվածության տարատեսակ ձևերը և ստեղծեց բանվոր դասակարգ։

—Բանվորների վիճակը գործարաններում ծանր էր։ Օրինակ՝ Ղափանում բանվորները ստանում էին օրական 40—50 կոպ., հաճախ քնում էին բաց երկընքի տակ. կամ խոնավ գետնի վրա։ Աշխատանքային պայմանները չէին ապահովում նրանց կյանքի անվտանգությունը։ Եթե բանվորը զրկվում էր ոտքից, ձեռքից կամ աչքից, ապա գործարանատերը կամ կառավարիչը ստիպում էր նրան լսել և բավարարվել մի քանի խղճուկ կոպեկներ ստանալով։ Օրենքով գործարանատերերը պարտավոր էին բանվորների համար բաց անել դպրոց, գրադարան, հիվանդանոց, բաղանիք և այլն, սակայն նրանք այդ ամենը չէին անում և փաստորեն տնտեսում էին բանվորների հաշվին։ «Բոլոր գործարանները պահում են մեկ ֆելդշեր, որին չեն տալիս նույնիսկ սենյակ, որտեղ նա կարողանա տեղավորել գոնե ծանր հիվանդներին»[65]։

— Բանվորների վիճակը դրեթե նույնն էր նաև Ալավերդու և Զանգեզուրի պղնձահանքերում։ Ալավերդում նրանք օրական աշխատում էին 14—16 ժամ և ստանում էին՝ հանքափորները՝ 40—50 կոպ., բարձողները՝ 30—35 կոպ. իսկ թափողները՝ 25—30 կոպ.։

Բամբակազտիչ գործարաններում աշխատանքը սովորաբար սկսվում էր առավոտյան ժամի 7-ից և ավարտվում երեկոյան 10-ին։ Այդ երկարատև աշխատանքի համար բանվորները օրական ստանում էին 30—35 կոպ.[66]։ Դրությունը համարյա նույնն էր գինու, օղեթորման և կոնյակի գործարաններում։

Բանվորների վիճակը վատ էր նաև կաթնամշակման ձեռնարկություններում։ Օրինակ՝ վերոհիշյալ Նիդիգերի բատրակները տարեկան ստանում էին 80 ռուբ., կամ օրական 20 կոպ. իսկ կովկիթները՝ ամսական 1,5 ռուբ., կամ օրական 5 կոպ.[67]։

Կարս քաղաքում տերերը, օգտվելով բանվորների անելանելի վիճակից, վարձում էին նրանց ավելի էժան. «փոր հաց կուզես, արի, չես գա — ուրիշ ներ շատ կան»[68]։ Եվ բանվորները, գտնելով, որ ուրիշներ շատ կան, համաձայնվում էին տիրոջ պայմանին։ Մի թղթակցության մեջ այս առթիվ նշվում էր. «բանվորը խեղճ է, նա լեզու չունի, նա չի կարող պաշտպանել յուր իրավունքը, յուր ստացվածքը, յուր պատիվը... ուրեմն պետք է խաբել նրան»[69]։

Բանվորները հաճախ կտրում էին իրենց բերանի հացը, ամիսներով տաք

---

[65] С. Заваряи. Экономические условия Карабаха и голод 1906—1907 гг. стр. 48.

[66] Տես „Новое обозрение", 1891, № 2648.

[67] Տես, „Кавказское сельское хозяйство", 1902, № 417.

[68] Տես, «Մուրճ», 1890, № 1, էջ 124։

[69] Նույն տեղում։

կերակուր չէին ուտում, հագնում էին ցնցոտիներ՝ որպեսզի կարողանան մի քանի կոպեկ ետ գցել՝ ընտանիքի կարիքները հոգալու համար։ Բայց փող հետ գցելը ոչ բոլոր դեպքերում և ոչ բոլորին էր հաջողվում։ Առանձնապես ծանր էր այն բանվորների վիճակը, որոնք աշխատում էին սեզոնից-սեզոն։ Գործարանը փակվելուց հետո նրանք դատապարտվում էին գործազրկության և դժվարությամբ էին տեղավորվում այլ աշխատանքի։

Բանվորները կեղեքումներին ու հարստահարումներին պատասխանում էին ռևոլյուցիոն ելույթներով։ Նրանք ակտիվ մասնակցություն ունեցան 1905 թ. թնչպես և 1917 թ. ռևոլյուցիաներին։